



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԲԱՐԵՐԱՐ ԼԵՐԻ ՊԱՐՆՉԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Հինգշաբթի, 1 Յուլիսի կեսօրին, Ազգային Առաջնորդարանին մեջ ընդունեց այցելութիւնը Լաս Վեկասի Ս. Կարապետ Եկեղեցւոյ գլխաւոր բարերար Տիար Լերի Պարնզի, որ Ազգային Առաջնորդարան ժամանեց ընկերակցութեամբ Եկեղեցւոյ ծխական յանձնախումբի ատենապետ Տիար Ատրուշան Արմենեանի եւ անդամ Տիար Լեւոն Կիլավենկեանի: Հանդիպումին ներկայ եղան Ազգային Վարչութեան եւ Առաջնորդարանի Շենքի Հոգատարութեան յանձնախումբի անդամներէն Տեարք Վահան Պատիկեան եւ Վահրիճ Փիլաւճեան:

Ծանօթ է, որ Տիար Լերի Պարնզ անցեալ Դեկտեմբերին, եւ ի յիշատակ իր հանգուցեալ կնոշ՝ Սեղա Տեր Կարապետեան-Պարնզի ու ցեղասպանութեան զոհ գացած անոր ընտանիքի անդամներուն, յանձն առած էր Լաս Վեկասի Նորահաստատ Եկեղեցւոյ բարերարութիւնը, կատարելով իշխանական նուիրատուութիւն մը: Ընդառաջելով Առաջնորդ Սրբազնին ու Թեմիս ժողովականութեան ինսդրանքին, եւ բարձր գնահատելով ազնիւ բարերարին նուիրաբերումը, Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Ս.Տ. Արամ Ա. Կաթողիկոս «Կիլիկեան Ասպետ»ի շքանշանը շնորհած էր անոր: Շքանշանին յանձնումը տեղի ունեցած էր 23 Մայիսին, Առաջնորդ Սրբազնին ձեռամբ, Լաս Վեկասի մեջ, Եկեղեցւոյ կից սրահին բացման հանդիսութեան առիթով: Անթիլիաս իր այցելութենէն (Յունիսի սկիզբը) վերադարձն ետք, Հինգշաբթի օր, Առաջնորդ Սրբազնը Վեհափառ Հայրապետին սրբատառ կոնդակը յանձնեց յարգելի բարերարին, անգամ մը եւս շնորհակալութիւն յայտնելով անոր նուիրաբերումին ու Լաս Վեկասի մեր ծխական համայնքին յարատել գօրակցութեան համար:

Տիար Լ. Պարնզ շնորհակալութեան խօսք ուղղեց Վեհափառ Հայրապետին ու Առաջնորդ Սրբազնին:

Հանդիպումի աւարտին, Առաջնորդ Սրբազնը բարերարն ու ներկաները հիւրասիրեց ճաշով, որուն աւարտին, խորհրդակցութեան նիւթ դարձան Ս. Կարապետ Եկեղեցւոյ շինարարութեան ծրագիրները, մեկնելով պատրաստուած նախագիծներէն Յանձնախումբը աշխատանքը կը տանի, որպէսզի շինարարական ու յարակից աշխատանքները գործնական ճամբու մեջ մտնեն յառաջիկայ ամիսներուն:

PRELATE WELCOMES BENEFATOR MR. LARRY BARNES

On Thursday, July 1st, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed the benefactor of St. Garabed Church of Las Vegas Mr. Larry Barnes. Mr. Barnes was accompanied by Las Vegas Parish Council Chair Mr. Adroushan Armenian and member Mr. Levon Gulbenkian. The Prelate was joined by Executive Council and Building Committee members Mr. Vahan Bezdikian and Mr. Vahrij Pilavjian.

In December of 2009, Mr. Barnes made a generous donation for the construction of St. Garabed Church in memory of his wife Seda Der Garabedian-Barnes. By the request of the Prelate and Councils, H.H. Catholicos Aram I awarded Mr. Barnes the "Knight of Cilicia" medal in recognition of his generosity, which the Prelate bestowed upon the benefactor during the inauguration of the cultural center hall on May 23rd, 2010. In June the Prelate returned from a visit to Antelias with the Pontifical encyclical, which he presented to Mr. Barnes during their meeting on Thursday. Mr. Barnes conveyed his appreciation to His Holiness and the Prelate for the honor.

Following the meeting the benefactor and guests were hosted to lunch, after which they went over the plans and blueprint of the church.